

<<ԳՈՒՅՆ>> ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՈՒՄԱՆ
ՀԱՐԱԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Գիտության հետազոտական օբյեկտների համակարգում իր ուրույն տեղն ունի գույն երևույթը: Վերջինիս նկատմամբ գիտնականների հետաքրքրությունը, հնագույն ժամանակներից սկսած, ոչ թե նվազում է, այլ ընդհակառակը, գնալով մեծանում՝ մասնավորապես գույն-գունընկալում-գունանվանում եռանդամի բաղադրիչների միջև առկա տարաբովանդակ փոխհարաբերությունների հետազոտման տիրույթում: Դա պայմանավորված է ոչ միայն և ոչ այնքան այն հանգամանքով, որ գույն երևույթը էութենական հատկանիշների ամբողջությամբ ու յուրակերպությամբ որպես հարուստ նյութ է ծառայում աշխարհի գիտական և գեղագիտական պատկերի ստեղծման համար, այլև շատ կարևոր օղակ է լեզու և մտածողություն, լեզու և հոգեբանություն, լեզու և մշակույթ երկանդամ փոխկապակցված իրողությունների գիտահետազոտական շղթայում: Այս նկատառումներից ելնելով՝ լիովին պատճառաբանված կարելի է համարել խնդրո առարկա երևույթների նկատմամբ անսպառ հետաքրքրությունն այնպիսի գիտաճյուղերի, ինչպիսիք են փիլիսոփայությունը, հոգեբանությունը, մշակութաբանությունը, լեզվաբանությունը և այլն: Այլ կերպ ասած, գույն-գունընկալում-գունանվանում եռանդամը մի եզակի և յուրօրինակ «տարածք է», որտեղ խաչմերուկում են վերոնշյալ գիտությունների հետազոտական ուղիները: Աշխարհի գունային պատկերի առանձնահատկությունների առաջին նկարագրություններն արդեն ի հայտ են գալիս Պլատոնի և Արիստոտելի աշխատություններում: Գունային օբյեկտի՝ որպես արժեքային համակարգի ընկալման առաջին մեկնություններից մեկը պատկանում է Պլատոնին: Նա իր «Phédon» աշխատության մեջ դրախտը նկարագրում է այնպիսի հստակ ու պայծառ գույներով, ինչպիսիք են բոսորագույնը (pourpre), ոսկեգույնը (doré) և սպիտակը (blanc) [Platon, 1970]: Արիստոտելը De Odoribus տրակտատում արտացոլում է այն միտքը, թե աշխարհի գույները ծնունդ են առնում խավարի և լույսի միախառնումից՝ հանդիսանալով աշխարհաստեղծ տարրերի՝ կրակի, օդի, ջրի և հողի գույներ [Aristote, 1993]:

Վերածննդի դարաշրջանի մտածողները, հիմք ընդունելով անտիկ աշխարհի փիլիսոփաների այս մտորումները, առաջ են քաշում, այսպես

կոչված «հիմնական» և «ածանցյալ» գույների գաղափարը, որը հետագայում ևս չդադարեց քննարկման առարկա լինելուց տարբեր գիտնականների կողմից: Այսպես, Լեոն Բատտիստա Ալբերտին իր «De pictura» աշխատության մեջ գրեթե նույնությամբ կրկնելով արիստոտելյան տեսակետը, առաջնային գույներ է համարում կարմիրը, կապույտը, կանաչը և գորշը, որոնք պատկանում են համապատասխանաբար կրակին, օդին, ջրին և հողին [Leon Battista Alberti, 2007]: Անտոնիո Տելեզիոն ընդարձակում է առաջնային գույների ցանկը՝ այն հասցնելով տասներկուսի, որոնցից, նրա կարծիքով, ածանցվում են մյուս գունային «ընտանիքները» [Antonio Telesio, 2010]: Լեոնարդո դա Վինչին հիմնական գույներ էր համարում սպիտակը, դեղինը, կանաչը, կապույտը, կարմիրը և սևը: Նա առաջիններից մեկն էր, որ անդրադարձավ նաև գույների ընկալման սուբյեկտիվ բնույթին: [Leonardo da Vinci, 1796]:

Տասնութերորդ դարից սկսած գույների ուսումնասիրությունը մկսեց ընդարձակել իր «տիրույթները»՝ ներառելով իր մեջ գույն երևույթի էությունական, ֆիզիկական կողմերը: Այս առումով հատկանշական է Իսահակ Նյուտոնի «Օպտիկա» աշխատությունը, որը, պարզապես, շատ գիտնականների կարծիքով, հեղաշրջում կատարեց «գույն» երևույթի գիտական ըմբռնման հարցում: Համապատասխան դիտարկումներ կատարելուց հետո, նա նկատեց, որ սպիտակ լույսը, անցնելով ապակյա պրիզմայի միջով, տարաբաժանվում է գունային սպեկտրի և հակառակը, գունային սպեկտրը նույն ճանապարհով վերածվում է սպիտակ լույսի: Սրանից ելնելով նա հանգեց այն եզրակացության, որ գույները ոչ թե ապակու մեջ են, այլ լույսի: Այսինքն, սպիտակ լույսը աչքի կողմից ոչ տեսանելի սպեկտրալ գույների խառնուրդ է, իսկ տարբեր գույների ի հայտ գալը կախված է լուսային ալիքների երկարությունից: Այլ կերպ ասած, ըստ Նյուտոնի, այս կամ այն գույնը ոչ այլ ինչ է, եթե ոչ լուսային ալիք՝ համապատասխան երկարության [Isaac Newton, 1787]:

Գույն երևույթի նյուտոնյան այս ֆիզիկական, թեկուզ և գիտական ըմբռնումը, անշուշտ, ինչպես պարզ դարձավ հետագայում, չէր կարող բավարար հիմք դառնալ տվյալ երևույթի գեղագիտական, հոգեբանական, առավել ևս լեզվաբանական մեկնաբանությունների համար: Այս առումով մեկ քայլ առաջ կարելի է համարել Յոհան Վոլֆգանգ Գյոթեի տեսակետը, համաձայն որի գունային պատկերացումները ստեղծվում են փորձի և գեղագիտական ընկալման՝ այլ ոչ թե միայն ֆիզիկական հատկանիշների հիման վրա: Ելնելով այս նկատառումներից՝ նա գույները դասում է երեք խմբի.

1. Ֆիզիկական - առաջանում է օպտիկական երևույթների շնորհիվ՝ թափանցիկություն և այլն:

2. Քիմիական - արդյունք է որոշակի քիմիական պրոցեսների:

3. Ֆիզիոլոգիական կամ հոգեբանական - տեսանելի միայն ընկալվող սուբյեկտի կողմից:

Ինչպես տեսնում ենք, Գյոթեն իր դասակարգման մեջ ներառել է մի կողմից դրանց առաջացման սուբյեկտիվ (ֆիզիոլոգիական, հոգեբանական), մյուս կողմից դրանց առաջացման օբյեկտիվ (ֆիզիկական, քիմիական) հատկանիշները: Ինչպես Արիստոտելն ու վերածննդի դարաշրջանի մի շարք մտածողներ, նա էլ գտնում է, որ հիմնականում, բնության մեջ, գույներն առաջանում են «լույսի» և «մթի» միախառնումից: Ըստ նրա միայն «դեղին» և «կապույտ» գույներն են հատկապես ընկալելի մարդու կողմից, քանի որ «դեղինը» շատ մոտ է լույսին, իսկ «կապույտը»՝ մթին, և այս երկու «բևեռների» միջև էլ գոյանում են մյուս բոլոր գույները: Հետաքրքրական է, որ Գյոթեն իր աշխատությունն ավարտում է գույների մասին այլաբանական և միստիկական խորհրդածություններով: Ղեղին գույնը նա զուգորդում է իմաստության, լույսի, ուժի, ջերմության, իսկ կապույտը՝ սակավության, սովերի, խավարի, թուլության և հեռացման հետ: Ամենայն հավանականությամբ, այս մտորումներն էլ հետագայում հիմք հանդիսացան սուբյեկտիվ ընկալման տեսանկյունից գույների հոգեբանական դասակարգումների համար («դրական», «բացասական», «սառը», «տաք» գույներ և այլն) [Goethe, 1986]:

Հիմնական և ածանցյալ գույների միջև դասակարգման հիմքում ընկած է Թոմաս Յունգի տեսությունը՝ Ջարգացնելով լույսի առաջացման ալիքային տեսությունը, լինելով միաժամանակ ֆիզիկոս և բժիշկ՝ նա խորամուխ եղավ գույների տեսողական, ֆիզիոլոգիական ընկալման խնդիրներին և առաջ քաշեց այն տեսակետը, թե աչքի թաղանթում առկա են երեք տեսակի «սուբստանցներ», որոնք ի վիճակի են ընդունելու երեք հիմնական գույների կողմից առաջացրած տարբեր հաճախականության լուսային ալիքներ: Մի խոսքով, Յունգը փորձեց հիմնական և ածանցյալ գույների գոյության մասին շրջանառվող տեսակետներին տալ ֆիզիկական և կենսաբանական հիմնավորում: [Tomac Юнг, 1800]:

Գույնի էութենական հատկանիշների ուսումնասիրության տեսանկյունից մեծ նշանակություն ունեցավ Ֆերդինանդ Ֆոն Հելմհոլցի գույների եռաբաղադրիչ տեսությունը, համաձայն որի բնության մեջ ցանկացած գունային օբյեկտ բնութագրվում է հետևյալ երեք հատկանիշներով.

1. Գունային տոն - գույնի ընդհանրական որակն է, որ մենք սովորաբար կոչում ենք կարմիր, կապույտ, կանաչ և այլն: Կարելի է համեմատել սպեկտրալ գույներից որևէ մեկի հետ, չափվում է լույսի ալիքի երկարությամբ:

2. Հագեցվածություն – տվյալ գունային օբյեկտի մեջ սպիտակի առատության չափը նմանագույն մեկ այլ օբյեկտի համեմատությամբ (մուգ կամ բաց գույներ):

3. Պայծառություն – տվյալ գունային օբյեկտի կողմից լույսն արտացոլելու աստիճանը (պայծառ և խամրած գույներ) [Фердинанд Фон Гельмгольц, 2002]:

Հեմիոլոգի այս տեսությունը անչափ կարևոր նշանակություն ունեցավ տարբեր լեզվամշակույթներում գունընկալման և գունանվանման տարաժամանակյա և համաժամանակյա ուսումնասիրությունների համար:

«Գույն» երևույթը, գիտության արդի նվաճումների տվյալներով էլ բնութագրվում է որպես ֆիզիկական և ընկալողական եռաչափ կոնստիտուում Նկատի ունենալով գույների միայն հագեցվածության հատկանիշը, գիտնականները գույները բաժանել են երկու մեծ խմբի՝ խրոմատիկ կարմիր, կանաչ, դեղին, կապույտ, նարնջագույն՝ և ախրոմատիկ (սպիտակ, սև, գորշ): Լուսային կարճ և երկար ալիքները զգալի տարբերություններ են առաջացնում խրոմատիկ գույների ընկալման ժամանակ և շատ հաճախ այդ տարբերությունները ստանում են փոխաբերական անվանումներ (ինչպես արդեն նշել ենք, տաք և սառը գույներ և այլն) [Лайонс,Д.Ж., 2003]:

Վերջերս ֆրանսիացի հետազոտող Կլոդ Ռոմանոն իր «Գույնը» խորագրով աշխատության մեջ կրկին անդրադարձել է արդեն դասական դարձած հետևյալ հարցադրումներին. վերջին հաշվով ի՞նչ է գույնը՝ մարդու հատուկ որակ, թե հարաբերվող երևույթներից բխող հատկանիշ: Մանրագնին վերլուծության ենթարկելով Վիտգենշտեյնի, Դեկարտի, Լոկի, Գյոթեի, Շոպենհաուերի փիլիսոփայական և Նյուտոնի բնագիտական ուսմունքները, Կլոդ Ռոմանոն հանգում է այն եզրակացության, որ գույնը առարկաների օբյեկտիվ հատկանիշն է այն չափով, որ չափով որ այն որոշակի ազդեցություն է գործում այդ հատկանիշը ընկալելու ընդունակ սուբյեկտի վրա: Գույները, գրում է նա, միայն մեր գիտակցության մեջ են, այլ ոչ բնության: Գույների սսհմանման «լավագույն» մակարդակը ոչ ֆիզիկականն է, ոչ հոգեբանականը, ոչ էլ անգամ կենսաբանականը, այլ միայն ֆենոմենոլոգիականը: [Claude Romano, 2010]: Այս գուտ փիլիսոփայական մոտեցումը փաստորեն երկրորդ պլան է մղում գույնի՝ որպես իրական երևույթի օբյեկտիվ գոյության/չգոյության գործոնը. կարևորելով միայն սուբյեկտի կողմից դրա ընկալման իրողությունը: Նման

կարծիք են հայտնում նաև այլ հետազոտողներ: Մասնավորապես, Ալիմպիևան գրում է. «Բնության մեջ գույն գոյություն չունի, այն արդյունք է գլխուղեղի հոգեբանա-ֆիզիոլոգիական գործունեության» [Алимпиева, Р.В, 1994]: Այս տեսակետը լիովին կիսում է նաև Ֆրումկինան: Բնության մեջ, գրում է նա, գույն որպես այդպիսին գոյություն չունի, գոյություն ունեն միայն որոշակի երկարության լուսային ալիքներ, որոնք ազդելով մարդու տեսողական ռեցեպտորների վրա և «վերամշակվելով» գլխուղեղի համապատասխան մեխանիզմների կողմից առաջացնում են զգացումներ, որոնք մենք գույն ենք անվանում [Фрумкина Р.М., 1984]:

Հարկ է նշել, որ վերջին շրջանի գիտական հետազոտությունները նոր հետաքրքիր փաստեր են արձանագրում խնդրո առարկա երևույթի կենսաբանական հիմնավորումների օգտին: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գլխուղեղի կեղևային շերտում գոյություն ունեն չորս հիմնական գունընկալման կենտրոններ՝ կարմիր, կանաչ, կապույտ, դեղին, որոնց գործունեությունը պայմանավորված է գենետիկորեն [Мичургина С.В., 2000]: Ջարգացնելով նշած գիտնականների տեսությունները, Ջոն Լակոֆն իր «Կինը. կրակը և վտանգավոր առարկաները» աշխատության մեջ գույն երևույթի հոգեբանական, կենսաբանական գործոնների թվին ավելացնում է ևս մեկը՝ մշակութայինը: Սխալ կլիներ մտածել, - գրում է նա, թե մարդուն հատուկ բոլոր կարգերը մարդուց դուրս իրականում գոյություն ունեն: Օրինակ՝ գունային կարգերը օբյեկտիվ նյութական աշխարհի հետ որոշակի առավելություններ ունենալով հանդերձ՝ նախ և առաջ պայմանավորված են մարդու կենսաբանական առանձնահատկություններով, մտածողությամբ և մշակութային գործոններով [Лаккофф Д., 2004]: Ջարգացնելով այս միտքը՝ Միշել Պաստուրոն իր «Գույնի պատմություն» աշխատության մեջ գրում է. «Հասարակությունն է գույներ ստեղծում արտիստի կամ գիտնականի միջոցով, հետո միայն մարդու կենսաբանական ապարատն ու բնությունը» [Pastoureaux M., 2000]: Ինչպես տեսնում ենք «գույն» երևույթի հետազոտությունների արդյունքների զգալի մասը վարկածային բնույթ է կրում, դրանք ոչ միայն լրացնում են մեկը մյուսին, այլ երբեմն էլ՝ հակադրվում, ինչը վկայում է այն մասին, որ խնդրո առարկա երևույթը դեռ կարիք ունի բազմակողմանի և մանրագնին ուսումնասիրության, մասնավորապես լեզվաբանական հետազոտությունների համար կայուն, գիտական հիմքեր ունենալու տեսանկյունից:

1. Alberti Leon Battista. De Pictura. Translated with the introduction and Notes by John R. Spenser, New Haven: Yale University Press, 1970, p. 224
2. Antonio Telesio. De coloribus libellus. Michel Indergand et Christine Viglino, Paris, Estienne, 2010, p. 142
3. Aristote. Theophrast. De Odoribus. Université Paris, Sorbonne, 2008 p. 605
4. Claude Romano. Au Coeur de la raison. Les éditions de la Transparence, 2010, p. 127
5. Goethe "Le Traité des couleurs". Introduction et notes de Rudolf Steiner, Éditions Triades, Paris, 1986, p. 250
6. Leonardo da Vinci. Traité de la peinture: Chez Deterville, Paris: 1796, p. 34
7. Michel Pastoureau. Bleu: Histoire d'une couleur. éditions du Seuil, 2002, p. 324
8. Newton Isaac: Optique de Newton. Bayerische Staats Bibliothek 1787, p. 182
9. Platon, *Œuvres complètes. Phedon*. édition de Léon Robin. Belles Lettres (CUF). Paris, 1970, p. 54
10. Алимпиева, Р.В. Семантическая значимость слова и структура лексико-семантической группы. На материале прилагательных цветообозначений русского языка. Уфа 1994, ст. 58-67
11. Лайонз Дж. Введение в теоретическую лингвистику. / Пер. с англ. М.: Прогресс, 1977, ст 84
12. Лакофф Д. "Женщина, огонь и опасные вещи. Что категории языка говорят нам о мышлении. Москва, 2004. ст. 75
13. Мичугина С.В. Денотативное пространство прилагательных цвета в английском языке. Диссертация. Москва 2005, ст. 206
14. Томас Юнг Трактат „Опыты и проблемы по звуку и свету“, Л. 1800, ст. 34
15. Фердинанд фон Гельмгольц "Основы вихревой теории", Москва. ИКИ, 2002, ст. 124 Наука
16. Фрумкина Р. М. "Цвет, смысл, сходство". Изд. ", 1984, ст. 33

The developement of the scientific understanding of the concept "colour"

The phenomenon of "colour" has always had its unique place in the system of science research facilities. It has always been in the center of attention of scientists from different spheres, such as philosophy, psychology, cultural studies and linguistics.

The following article deals with different, sometimes complementary, sometimes contradictive approaches to the phenomenon "colour". Here I would like to dwell further on two most distinctive theories.

According to Isaac Newton the white colour is a mixture of invisible spectral colours and the appearance of other colours depend on the length of light waves.

Lately, quite a different, contradicting approach was formed by a French scientist Klod Romano and his followers who claim that colors exist only on the subconscious level but not in nature.

It is worth mentioning that recent scientific researches show that there are four main color perception centers (red, green, blue and yellow) in human brain that carry out a genetically determined activity.